

ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 24.—Յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմի:

Մայր հայրենիքում և սփյուռքում ամեն տարի համայն հայ ժողովուրդը ոգեկոչում է Ապրիլյան եղեռնի իր նահատակների անմոռաց հիշատակը, իր գլուխն է խոնարհում նրանց սրբացված շիրիմների առջև: Մեր նահատակները, ավա՜ղ, չունեցան ո՛չ գերեզման և ո՛չ էլ անգամ նույնիսկ մի համեստ տապանաքար:

Կոտորվեց մի ողջ ժողովուրդ, կոտորվեց իր տան, իր դարավոր հայրենիքի մեջ:

1915 թ. ապրիլի 24-ին թշնամին փորձեց հայ ժողովրդի վրա արձակել «ամբողջ չարիքն աշխարհի» և ողջ-ողջ գերեզմանել հաւ:ության:

Բայց այսօր, Եղեռնից 66 տարիներ հետո էլ, կա՛, ապրո՛ւմ և ստեղծագործո՛ւմ է հայ ժողովուրդը:

Նորից վերածնվեց մեր մայր հայրենիքը, նորից վերածնվեց մեր ժողովուրդը: Չնայած դեռևս ամբողջությամբ չեն բուժվել նրա արյունոտ վերքերը, բայց նա վերածնվեց ու երբեք չմոռացավ և երբևէ չի էլ մոռանա աներեր անցյալը, ինչպես չմոռացավ Սուրբ Ավարայրը:

Ապրիլի 24-ին Ս. Էջմիածնի Մայր տաճարում մատուցվում է սուրբ պատարագ Եղեռնի նահատակների հիշատակին:

Հնչում են եկեղեցու զանգերը՝ իրենց սրբազան ղողանջը խառնելով երկնքում Օվսաննա երգող շուրջ երկու միլիոն նահատակների աղոթքներին:

Եկեղեցին և շրջափակը լցված է հազարավոր հավատացյալներով, ուսանողներով ու երիտասարդներով, որոնք եկել են մայրաքաղաքից, Հայաստանի տարբեր շրջաններից, գյուղերից ու քաղաքներից: Կան նաև բազմաթիվ սփյուռքահայ ուխտավորներ, որոնք երկյուղածությամբ լսում են սուրբ պատարագը:

«Հայր մեր»-ից առաջ Նահատակաց սուրբ խորանի առջևից ոգեշունչ քարոզ է խոսում պատարագիչ Տ. Գրիգորիս վրդ.

Բունիաթյանը՝ օրվա մեծ խորհրդի մասին, հանգամանալից ձևով ներկայացնում 1915 թվականի երիտասարդ թուրքերի վարած հայատյաց քաղաքականությունը և ոգեկոչում նահատակների սուրբ հիշատակը:

Պատարագիչ հայր սուրբը հատկապես նշում է, որ հայ ժողովուրդը չնայած կոտորվեց, բայց չմեռավ և գիտցավ իր նահատակությունը վերածել հաղթանակի, ազգային վերածնունդի, հաղթեց այսօրվա իր Հայաստանով, հաղթեց նոր Անի դարձած իր Երևանով, տիեզերքի խորհուրդը բացող իր Բյուրականով:

Եվ ոչ միայն հաղթեց, այլև իր նահատակների վրեժը լուծեց, ոչ թե արյունով, այլ երգով ու ծաղկով, իր վերածնունդով, իր հավերժ ապրելու իրավունքով:

Երբեք, երբեք հայ ժողովուրդը չի ընկրճվել ճակատագրի ծանր հարվածներից: Մեր ժողովրդի ուժի և հավերժության գաղափարը այս գիտակցության մեջ է:

Սուրբ պատարագից հետո Մայր տաճարի հյուսիսային մասում կանգնեցված Ուխտի և Աղոթքի նահատակաց հուշարձանի առջև կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ նախագահությամբ Սիոն արքեպ. Մանուկյանի: Հոգևոր ճեմարանի ողջ ուսանողությունը, միաբանները և մեծ թվով հավատացյալներ, որպես հարգանքի տուրք, ծաղիկներ են դնում հուշարձանի առջև:

Նույն օրը, ժամը 15-ին, հոգևոր ճեմարանի ուսանողությունը, ծաղիկներ ի ձեռին, բազմահազար ժողովրդի հետ, բարձրանում է Ծիծեռնակաբերդ՝ իր գլուխը խոնարհելու Ապրիլյան եղեռնի նահատակների հուշարձանի առջև:

Ժամը 19-ն է: Ողջ հանրապետության մեջ հայտարարվել է Լռության րոպե: Համայն հայ ժողովուրդը, մեկ սիրտ և մեկ հոգի, հպարտ լռությամբ իր հարգանքն է մատուցում իր նահատակների հիշատակին:

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ



ՀԱՅԿ ԳՐՈՒՄ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱԿԱԴԵՄԻԱ